# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք,
ՀՀ Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, Հեռ.
(091)301930 , norkyurin.ararat@mta.gov.am

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵ
ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

N 78
*28 օգոստոս 2018թ.*

Կից Ներկայացնում եմ Արարատի մարզի Նոր Կյուրին համայնքի ավագանու՝ 21.08.2018 թ. թիվ 18 և 19 - Ն որոշումները :

Առդիր՝ 3 էջ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 18

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել օրակարգը.

1. ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ
3. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյուրին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյուրին, (091)301930, norkyurin.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 19-Ն

## ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով `

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները .

1. 6-4-1 փողոցների լուսավորության 4212 էներգետիկ ծառայություն հոդվածն ավելացնել 90.0 հազ. դրամով ` ի հաշիվ 11-1-2 պահուստային ֆոնդի 4891 պահուստային միջոցներ հոդվածի :

2.1-6-1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 4241` մասնագիտական ծառայություններ հոդվածն ավելացնել 300.0 հազ. դրամ , 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածը` 100.0 հազ. դրամ ` ի հաշիվ 11-1-2 պահուստային ֆոնդի 4891 պահուստային միջոցներ հոդվածի:Վերը նշված մասնագիտական ծառայություններ հոդվածին 300.0 հազ. դրամ ավելացման նպատակը հետևյալն է.Քանի որ Նոր Կյուրին համայնքում գոյություն ունի նախկին ամառանոցային կամ այգեգործական թաղամաս , որտեղ կա մոտ 1000 միավոր հողակտոր ( նշված թաղամասի հողակտորները հիմնականում ունեն 500-700 քմ մակերես ) , որոնց սեփականատերերի մոտ 70 %-ի հասցեները կամ կոնտակտային որևէ տվյալ համայնքապետարանում առկա չէ . նշված հողակտորները սեփականաշնորհվել են 1990-ական թվականներին , որից հետո մինչ օրս սեփականատերերը որևէ հետաքրքրություն չեն ցուցաբերել հիշյալ հողամասերի նկատմամբ և գրեթե համայնք չեն այցելում , հետևաբար նշված տարածքի հողի հարկի հավաքագրման աշխատանքները չափազանց բարդ է (նշված տարածքի հողակտորների հողի հարկերի պարտքը , յուրաքանչյուր միավոր հողամասի նկատմամբ տատանվում է 3000 - 8000 դրամի սահմաններում , և համայնքի հողի հարկի ապարտքների մեծ մասը գոյացել է նշված տարածքից) : Հիշյալ և այլ անբարեխիղճ հողասեփականատերերին հայտնաբերման , ծանուցման և անհրաժեշտության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության ԴԱՀԿ ծառայության միջոցով պարտքերի գանձման գործընթաց սկսելու նպատակով համայնքապետարանը համապատասխան աշխատանքային ռեսուրս , մասնագետներ` իրավաբաններ չունի , ուստի նշված աշխատանքները առավել նպատակահարմար է պատվիրել հիշյալ ոլորտում մասնագիտացված իրավաբանական կազմակերպության, որը կարժենա 200-300 հազ. դրամ . դա հնարավորություն

կտա համայնքապետարանի բնականոն աշխատանքին զուգահեռ կարճ ժամանակում արձանագրել ապարտքների գանձման բարձր ցուցանիշ :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՍԱՀԱԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
2. ՍԻԱՆՈՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ
3. ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՕՀԱՆՅԱՆ